ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ВАЙОЦ ДЗОРСКАЯ ОБЛАСТЬ
"ВАЙОЦ ДЗОРСКИЙ МЕДИЦИНСКИЙ ЦЕНТР"
ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

Հասցե՝ ք. Եղեգնաձոր Զորավար Վարդան/ Շ/ 12/1
Էլ.հասցե Vayotsdzorbk24@gmail.com
Հեռ. +37460840110

«ԱՖԱՐՄԱՑԻԱ» ՓԲԸ-ի տնօրեն
պարոն Ա. Հովհաննիսյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ԱՖԱՐՄԱՑԻԱ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Վաճառող) միջև 21.01.2025 թվականին կնքվել է թիվ ՎՁԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/02-1 ծածկագրով մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1.1-ին կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում եւ հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված եւ սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման եւ գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը եւ վճարել դրա համար: Մատակարարման ենթակա ապրանքների թվում է նաև Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի 41-րդ չափաբաժնում ներառված «Պրոպոֆոլ 10 մգ/մլ» դեղը:

«Պրոպոֆոլ 10 մգ/մլ» դեղի մատակարարման պահանջը Պատվիրատուի կողմից Վաճառողին ներկայացնելուց հետո ստացվել է «ԱՖԱՐՄԱՑԻԱ» ՓԲԸ-ի 02.05.2025 թվականի թիվ 01/79 գրությունը, որով վերջինս հայտնել է, որ Վաճառողից անկախ պատճառներով՝ ՀՀ-ում գրանցված «Պրոպոֆոլ» դեղի՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներմուծման մերժման հետևանքով, անհնարին է դարձել վերոնշյալ դեղի մատակարարումը: Հաջորդիվ պահանջվել է ներկայացնել նշված գրության մեջ հիշատակված փաստերը հիմնավորող ապացույցները, որոնց հետազոտման արդյունքում պարզվել է, որ մերժվել է «ԱՖԱՐՄԱՑԻԱ» ՓԲԸ-ի կոնտրագենտի՝ «ՖԱՐՄԱՏԵՔ» ՓԲԸ-ի կողմից վերոնշյալ դեղի ներմուծումը, որը պետք է ներմուծումից հետո նշված դեղը մատակարարեր «ԱՖԱՐՄԱՑԻԱ» ՓԲԸ-ին, իսկ վերջինս էլ՝ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ *«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը»:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի 2.1.7.1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վաճառողի 02.05.2025 թվականի թիվ 01/79 գրությունից պարզ է դառնում, որ վերջինիս կողմից Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի 41-րդ չափաբաժնում ներառված «Պրոպոֆոլ 10 մգ/մլ» դեղի մատակարարման անհնարինությունը պայմանավորված է Վաճառողի կոնտրագենտի՝ «ՖԱՐՄԱՏԵՔ» ՓԲԸ-ի կողմից վերոնշյալ դեղի՝ Վաճառողին չմատակարարմամբ (անկախ դրա պատճառներից), ինչը չի կարող գնահատվել որպես Պայմանագրի շրջանակներում Վաճառողի կողմից ստանձնած «Պրոպոֆոլ 10 մգ/մլ» դեղի մատակարարման պարտավորության կատարման անհնարինությունը հիմնավորող և պատասխանատվությունից ազատող հանգամանք:

Վաճառողի 02.05.2025 թվականի թիվ 01/79 գրության ստացումից հետո անցել է ավելի քան 5 օր ժամանակ, իսկ պահանջված «Պրոպոֆոլ 10 մգ/մլ» դեղը մինչ սույն ծանուցման օրը չի մատակարարվել Պատվիրատուին, ինչը նշանակում է, որ Վաճառողը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի: Հետևաբար, Պատվիրատուն ձեռք է բերել այդ հիմքով Պայմանագիրը մասնակի լուծելու իրավունք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ **ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և Պայմանագրի վերը նշված դրույթներով՝ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի՝ Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի 41-րդ չափաբաժնի մասով լուծում է Պայմանագիրը:**

Միաժամանակ տեղեկացնում ենք Ձեզ, որ սույն ծանուցումը հրապարակվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Պատվիրատուի՝ «Ակբա Բանկ» ԲԲԸ-ում գործող թիվ 220023331865000 հաշվեհամարին ենթակա է վճարման **17325 (տասնյոթ հազար երեք հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի կատարման ապահովում, և 25988 (քսանհինգ հազար ինը հարյուր ութսունութ) ՀՀ դրամ՝ որպես որակավորման ապահովում:**

Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվեն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի տնօրեն՝

Խ. Նազարյան /_____/